Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ <<ՀՀ Արարատի մարզի Նոր ուղու միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի
Քիմիա՝8 ժամ, աշխարհագրություն՝ 11 ժամ, ինֆորմատիկա՝ 7 ժամ, ՀԵՊ՝ 5 ժամ
թափուր տեղի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝3 X 4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
-<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն (Ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ:
Հրատարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ,մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են փետրվարի 07-ից մինչև 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10 ᵒᵒ-ից 15ᵒᵒ-ը, բացի շաբաթ,կիրակի և ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթը տեղի կունենա փետրվարի 22-ին ժամը 14ᵒᵒ-ին , Արարատի մարզի Նոր ուղու միջնակարգ դպրոցում, հասցեն գ. Գինեվետ:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 85-00-32 հեռախոսահամարով: